ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑՈՒ ՃԳՆԱՐԱՆ-ՔԱՐԱՅՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԷԼԵՈՆՈՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գեղարդի ճարտարապետական հուշարձանների համալիրը կազմող շրջակա ժայռերի մեջ փորված կառույցներում ուշագրավ է XIII դ. մատենագիր, պատմիչ Մխիթար Այրիվանեցու ճգնարանը։ Աշխատելու և աղոթելու համար նախատեսված արհեստական այդ քարայրն աչքի է ղարնում բնակվելու նպատակով ստեղծված կառուցվածքային հարմարություններով[1]։ Սա ինքնին ընդգծում է այս ճգնարանի նշանակությունը միջնադարյան նման կառույցների շինարարական արվեստի պատմության ուսումնասիրման համար։ Այս կառույցի պատմական նշանակությունը մեծանում է՝ կապված նրա բնակիչ Մխիթար Այրիվանեցու անվան հետ։ Պահպանվել է քարայրի կառուցման արձանագրությունը, որը լույս է սփռում Այրիվանեցու կենսագրության հատկապես վերջին տարիների վրա։ Այն փորագրված է քարայրի հիմնական մուտքի կողքի պատին՝ դրսի կողմից։ Ժամանակի ընթացքում պատի վրա, երկարությամբ, առաջացել է ճեղք, որով արձանագրությունը բաժանվել է երկու մասի։ Ներկայումս այն որոշ չափով նաև հողմահարված է։ Այս հանգամանքները, սակայն, չեն խաթարել արձանագրության բովանդակությունը, որը հիմնականում ընթեռնելի է։

Ժամանակին այդ արձանագրության բնագիրը վերծանել և հրատարակել է Գ. Հովսեփյանը՝ կապված Այրիվանեցու ծննդյան թվականի ճշգրտման հետ։ Նկատենք, որ մատենագրի կենսագրության մասին պահպանված տեղեկությունները կցկտուր են։ Եղածներն էլ հատուկենտ հիշատակություններ են՝ ցրված նրա ստեղծագործություններում։ Որոշ բանասերներ Մխիթար Այրիվանեցու ծննդյան և մահվան թվականները որոշել են ենթադրաբար՝ առաջնորդվելով նրա գրած ժամանակագրության վերջին թվականով (1289)։ Օրինակ, Գ. Գալեմքյարյանը[2], Ք. Պատկանյանը[3] նրան դիտել են որպես XIII դ. հեղինակ։ Ըստ Մ. Բրոսսեի[4], Ղ. Ալիշանի[5] և Ն. Ակինյանի[6], որոնց

---

1 Գ. Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի, նորագյուտ արձանագրություն և երկեր, Երուսաղեմ, 1931, էջ 4—5, Է. Սարգսյան, Մ. Սարգսյան, Գեղարդի վիմափոր կառույցների մի խումբ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններին», 1981, № 4, էջ 107—108)։ Հոդվածի հեղինակները, կրկնելով Գ. Հովսեփյանին (նշվ. աշխ., էջ 5), գրում են, որ Մխիթար Այրիվանեցին իր նշանավոր «Ճառընտիրը» ընդօրինակել է այս քարայրում։ Նկատենք, որ «Ճառընտիրը» գրվել է 1253 թ., իսկ քարայրը կառուցվել է 1289 թ. (տե՛ս Э. О. Арутюнян, Сборник, составленный Мхитаром Айриванеци (1283 г.), («Памятники культуры, новые открытия», М., 1979, с. 7—12)։

2 Գ. Գալեմքյարյան, Մխիթար Այրիվանեցին և յուր նորագյուտ գրությունը («Հանդես ամսօրյա», Վիեննա, 1891, էջ 168)։

3 Хронографическая история, составленная отцом Мхитаром, вардапетом Айриванским» («Труды восточного отделения Императорского Археологического общества», ч. 14, СПб., 1869, с. 311—418).

4 „Histoire chronologique par Mkhithar d'Airivank, XIIIe s.", St. Pétersbourg, 1869, p. II, III, 72.

5 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 350—351։

6 Ն. Ակինյան, Մխիթար Այրիվանեցվո Ճառընտիրի նորագյուտ հիշատակարանը («Ակոս», Բեյրութ, 1946, № 13, էջ 120—121)։

համար հիմք է ծառայել ժամանակագրությունում առկա XIV դ. սկզբին ապրած պատմական անձանց հիշատակությունները, Մխիթար Այրիվանեցին XIII—XIV դդ. հեղինակ է։ Գ. Հովսեփյանը նրան ծնված է համարում 1222 թ., իսկ մեռած՝ 1291 թ.։ Այժմ այս կարծիքը համարվում է ընդունելի, սակայն այն կարոտ է ճշգրտման և վերանայման։ Բանն այն է, որ Գ. Հովսեփյանի հիմնական ելակետը Այրիվանեցու վերոհիշյալ քարայրի արձանագրությունն է, ուր նշված է այդ առանձնարանի կառուցման տարեթիվը՝ «ՉԼԸ» (1289)։ Այն թվագրված է 6 ուրիշ տարեթվերով, որոնցից 5-ի հաշվումները հանգեցնում են 1289—1290 թվականներին, իսկ մեկինը՝ 167-ի («ՃԿԷ»)[7]։ Ահա այս վերջին թվականն է, որ Գ. Հովսեփյանը հիմք է ընդունել Այրիվանեցու ծննդյան տարեթիվը ճշտելու համար։ Նա «ՃԿԷ» թվականի «Ճ»-ն համարելով եղծված՝ դուրս է թողել հաշվից։ Հենվելով «ԿԷ»-ի (67) վրա, հաջորդ բառերն էլ կարդալով որպես «ամմերց», եզրակացրել է, թե Մխիթար Այրիվանեցին քարայրը կառուցելիս եղել է «ԿԷ» (67) տարեկան։ Ըստ այդմ էլ, նա քարայրի կառուցման տարուց (1289) հանելով 67 տարի, ստացել է 1222 թ., որն էլ դիտել է իբրև Այրիվանեցու ծննդյան տարեթիվ։ Գ. Հովսեփյանն այդ վերծանումը սկզբում կատարել է որոշ վերապահումով («եթե սխալ չէ մեր ընթերցումը»)[8], իսկ հետագայում որպես հաստատ եզրակացություն[9]։ Բանասերներն էլ, հենվելով այս վերջինի վրա, այն ընդունել են անվերապահորեն[10]։ Խորամուխ լինելով Մխիթար Այրիվանեցու կենսագրական հարցերի մեջ, նրա քարայրը տեսնելու և արձանագրությունն անձամբ կարդալու նպատակով եղանք տեղում։ Արձանագրության մեր ընթերցումն ի հայտ բերեց որոշ տարբերություններ Գ. Հովսեփյանի հրատարակած բնագրի համեմատությամբ։ Հարկ ենք համարում ստորև ներկայացնել արձանագրության մեր ընթերցած բնագիրը, տողատակում նշելով Գ. Հովսեփյանի վերծանության տարբերությունները։

I ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ[11]

ա. Ի ՓԱՌՍ ՔՈ ՔՍ ԱՏ ՄԵՐ ԵՒ Ի ԳԹՈՒԹ Հ
բ. ԱՒՐ ԵՒ ՀՈԳՈՅԴ ՍՐԲՈ։ ԵՍ ԲԱԶՄԱՄԵՂ ՏԷՐ ՄԽԻԹԱՐՍ
գ. ՇԻՆԵՑԻ ԶԱՆԱՊԱՏՍ։ ԵՒ ԱՆՈՒԱՆԵՑԻ ԺԱՄԱՏ
դ. ԱՆՍ ՏԵՂԻ ԱՆՍԲԱՂ ԱՂԱՒԹԻՑ ԲՆԱԿԵՑԱ Ի ՍՄԱ ԱՒՈՒՐՔՍ
ե. ԻԴ. ԿԱՆՈՆԱՒՔ ԲԱՑՑ ԹԷ ԸՆԹԵՐՑՈՒՄՆ ԿԱՄ ՀՈԳԻՇԱ
զ. Հ ԲԱՆՔ ԱՆԷԻՑ ԵՆ ԱՂԱՋԵՄՔ ԶԱՄԵՆԵՍԵԱՆ ՅԻՇԵԼ
է. ԶՄԵԶ ԱՌԱՋԻ ՔԻ ԶԻՇԱՆՆ ՄԵՐ ԶՊՌԱՒԻՇ ԵՒ
ը. ԶԱՒՐՀՆԵԼ ԶԱՒԱԿՍ ՆՈՐԱ։ ԹՎ :ՉԼԸ: Ի ՀԱ ԳՐՈ

---

7 Արձանագրությունների նման թվագրումը հատուկ է եղել X—XIII դդ. (տե՛ս Ս. Ավագյան, Անիի մայր տաճարի շինարարական արձանագրության տարեթվերը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1979, № 11, էջ 70—77)։

8 Գ. Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի, էջ 4—5։

9 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս—Լիբանան, 1969, էջ 207։

10 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 120, Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 3, Երևան, 1946, էջ 378, Բ. Սարգսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց ի Վենետիկ, հ. 3, Վենետիկ, 1966, էջ 702, Ռ. Իշխանյան, Հայ մատենագիտության պատմություն, պրակ Ա, Երևան, 1964, էջ 36։

11 ա. ՄԵՐ Ի փխ ՄԵՐ ԵՒ Ի
բ. ՄԽ. ՎԴ. փխ ՄԽԻԹԱՐՍ
դ. ԲՆԱԿԵՑԱ ՍՄԱ ԱՒՈՒՐ փխ ԲՆԱԿԵՑԱ Ի ՍՄԱ ԱՒՈՒՐՔՍ
ե. ԲԱՑՑ Թ. ԸՆԹԵՐՑՈՒՄՆ փխ ԲԱՑՑ ԹԷ ԸՆԹԵՐՑՈՒՄՆ
զ. ԲԱՆՔ Ի ՆՅՆ փխ ԲԱՆՔ ԱՆԷԻՑ ԵՆ

թ. Ս :ՊԿԹ: Ի ՍՐԲՈՆ ԳՐԻԳՈՐԷ :ՋՁԵ: Ի ՔԻ ԾՆՆԴԵՆԷՆ:
ժ. ՌՄՂԱ: ԱԴԱՄԱ :ՅՆՁԹ: ՓՔՐ ԹԻ :ՄԶ: ՃԿԷ: ԱՄԱՅ
ժա. ...ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԻ...
ժբ. ՏՐՅ ԳՐ... ՅՐԻՇԵՅԷՔ] Ի ՔՍ

1. Ճգնարան-քարայրի արձանագրությունը։

II ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ի վառս քո Քրիստոս աստուած մեր եւ ի գթութիւն հաւր եւ հոգոյդ սրբոյ, ես՝ բազմամեղ տէր Մխիթարս շինեցի զանապատս եւ անուանեցի ժամատանս տեղի անսրաղ աղաւթից, բնակեցա ի սմա աւուրքս ԻԴ կանոնաւք, բայց թէ ընթերցումն կամ հոգեշահ բանք անէից են։ Աղաչեմք զամենեսեան յիշել զմեզ առաջի Քրիստոսի զիշխանն մեր զՊռաւշ եւ զաւրհնել զաւակս նորա։ Թվ. :ՉԼԸ: (1291 թ.), ի հայ գրոս :ՊԿԹ: (1292 թ.), ի սրբոյն Գրիգորէ :ՋՁԵ: (1292 թ.), ի Քրիստոսի ծննդենէն :ՌՄՂԱ: (1291 թ.), Ադամա :ՅՆՁԹ: (1291 թ.), փոքր թիվ :ՄԶ: (1291 թ.), ՃԿԷ: ամաց... կատարած աշխարհի...: Տիրացու գրիչ յ[իշեցէք] ի Քրիստոս։

թ. Ի ՄԵՐՈՅՆԻ փխ Ի ՍՐԲՈՆ
ժ. ՄԹ... ԿԷ. ԱՄՄԵՐՅ փխ ՄԶ: ՃԿԷ ԱՄԱՅ

Քննվող հարցի առնչությամբ կարևոր են հատկապես արձանագրության ը-ժա-րդ տողերի բովանդակած թվական փաստերը։ Այստեղ նշված յոթ հիշարժան տարեթվերից 6-ի հաշվումները համապատասխանում են Այրիվանեցու ժամանակագրության հաշվումներին և հանգեցնում են երկու՝ 1291 և 1292 թվականներին։ Դրանք են. արձանագրությունը փորագրելու տարին՝ ՉԼԸ (738+553=1291), հայ գրերի գյուտի թվականին՝ ավելացրած ՊԿԹ



2. Արձանագրության գրչագիրը։

(869+423=1292), հայոց կաթողիկոսության հաստատման թվականին՝ ավելացրած ՋՋԵ (985+307=1292), Քրիստոսի ծննդից հաշված՝ ՌՄՂԱ (1291), Ադամի ծննդից հաշված՝ ՅՆՋԹ (6489—5198=1291), Հովհաննես Սարկավագի ստեղծած Հայոց փոքր թվականին ավելացրած ՄՋ (206+1085=1291)[12]։ Այստեղ նկատենք հետևյալը. Մխիթար Այրիվանեցին այն հեղինակներից է, որոնք Քրիստոսի ծննդյան թվականն ընդունել են ոչ թե մեր թվականության 1 թիվը, այլ դրանից երկու տարի շուտ, հայկական քրիստոնեական 553 թ.։

12 Գ. Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի, էջ 5։ Գ. Հովսեփյանի մոտ, հավանաբար տպագրական սխալի հետևանքով, Ադամի ծննդից հաշվումը նշված է 6439 թվականով։ Արձանագրությունում հիշատակված տարեթվերն առկա են Մխիթար Այրիվանեցու Պատմությունում։ Այսպես, օրինակ, «ՆԻԳ։ Սկիզբն դպրութեան հայ գրոցս ի ձեռն սրբոյն Սահակայ, Մեսրովբա՝ որք Կ աշակերտաւք աշխատեալք, թարգմանեցին զամենայն Հին և Նոր կտակարանս» (Մ. Մաշտոցի անվան մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 582, թ. 31բ)։ Կամ «ՇԼԴ (534+551=1085)։ Սկիզբն Նոր թվականին, որ կարգեցաւ ի Յոհաննես վարդապետէ Հաղբատեցոյ, որ Սարկավագ կոչեցաւ։ Սայ արար անշարժ տոմար ըստ այլոց ազգացս» (նույն տեղում, թ. 38բ)։

Այս կապակցությամբ նա գրում է. «Ի ծննդենէն Քրիստոսի ի հայ թիւ ՇՄԳ (553)»[13]։ Ուստի, ըստ ներկայումս ընդունելի հայկական քրիստոնեական 551 թ. հաշվումների, արձանագրությունում հիշատակված են 1289, 1290 թթ.։ Տարեհաշիվները տրված են Այրիվանեցու կողմից, այնպես որ երկու թվականների (1289 և 1290) առկայությունը չենք կարող դիտել իբրև թյուրիմացության արդյունք։ Դրա բացատրությունը գտնում ենք դարձյալ արձանագրության մեջ։ Նրա 4—5-րդ տողերում գրված է. «բնակեցա ի սմա աւուրքս ԻԴ կանոնաւք»։ Այսինքն՝ ապրում էր այնտեղ ճգնավորների համար սահմանված կանոններով։ Արդյո՞ք դա չի խոսում նաև այն մասին, որ արձանագրությունը փորագրվել է ոչ անմիջապես, այլ որոշ ժամանակ անց։ Միայն այս դեպքում Այրիվանեցին կարող էր գրել «բնակեցա ի սմա»։ Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ առանձնարանը կառուցվել է 1289 թ., իսկ արձանագրությունը փորագրվել է Մխիթարի՝ այնտեղ մեկ տարի ապրելուց հետո միայն, 1290 թ.։ Ուշագրավ է, որ արձանագրությունում պահպանված է նաև փորագրիչի՝ Տիրացու գրչի անունը։

Անդրադառնալով մեզ հետաքրքրող յոթերորդ տվյալին («ՃԿէ»), տեսնում ենք, որ արձանագրությունում այն առնչվում է հաջորդ նախադասության հետ, որից ընթեռնելի են միայն «ամաց» և «կատարած աշխարհի» բառերը. դրանց միջև եղած երկու բառերը մնում են անվերծանելի։ Ըստ այսմ, «ՃԿէ»-ն (167), հավանաբար, կապվում է աշխարհի կործանման վերաբերյալ եղած որևէ գուշակության հետ։ Հայտնի են մի շարք այդպիսի գուշակություններ. օրինակ, Հովհաննես Կոզեռն վարդապետի տեսիլը՝ աշխարհի կործանման վերաբերյալ, որը Այրիվանեցու Պատմությունում ենթադրված է 1031—1041 թթ. միջև[14]։ Պարզ է, որ այն չի կարող առնչվել վերոհիշյալ «ՃԿէ» թվականի հետ։ Նման հաշվումներ են կատարվել նաև XIII դ. սկզբներին, որոնց համաձայն «Հայոց ՊԿԵ (1416) թվականին, լուսինը կատարյալ ձև ստանալով, այլև չի նվազելու... և տեղի է ունենալու «վախճան ժամանակի»[15]։ Հիշյալ թվականի և Մխիթար Այրիվանեցու նշած թվականի տարբերությունը 42 տարի է (1291+167=1458 թ.)։ Այս առումով հետաքրքիր է Այրիվանեցու ժամանակագրությունում գրառված հետևյալ տեղեկությունը. ներկայացնելով Ադամի ճյուղագրությունը, նա Մաթուսաղայի մասին գրում է. «1287, ԵՆՈՎՔ և Յադներ ամաց ՃԿԵ (165) ծնան զՄաթուսաղայ։ Սա... ուիտեաց, թէ Բ անգամ անցանելոց է աշխարհ վասն մեղաց՝ ջրով և հրով...»[16]։ Ընդ որում, Մաթուսաղայի ապրած տարիների քանակը նույնպես նշված է «ՃԿԵ» թվով։ Հնարավոր է կարծել, որ արձանագրությունում աշխարհի վախճանի մասին եղած տեղեկությունը՝ «ՃԿէ», ինչ որ չափով առնչվում է Մաթուսաղայի գուշակության հետ։ Սակայն իրերի ներկա վիճակում այս հարցում ստուգություն մտցնել չենք կարող։ Անկախ այս հաշվումից, դժվար չէ նկատել, որ «ՃԿէ»-ն եղծված չէ և չի առնչվում Այրիվանեցու տարիքի, հետևապես և նրա ծննդյան թվականի հետ։

Քննվող արձանագրությունը, սակայն, լույս է սփռում Մխիթար Այրիվանեցու կենսագրության վերջին տարիների վրա։ Այսպես, նրա մահվան թվականի վերաբերյալ ևս, ինչպես ասվեց, որոշակի տեղեկություններ չկան։ Ըստ Գ. Հովսեփյանի, Այրիվանեցու մահը պետք է ընդունել «ՉԼԸ—ՉԽ թվականներին, մոտավորապես 70 տարեկան հասակում, քանի որ ՉԼԸ թվակա-

---

13 Նույն տեղում, թ. 27բ։

14 Նույն տեղում, թ. 37բ, Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Երևան, 1957, էջ 45—46։

15 Լ. Խաչիկյան, Հայ բնագիտական միտքը XIV—XVIII դարերում («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2, էջ 29)։

16 Մատենադարան, ձեռ. № 582, թ. 19ա։

նին 67 ամեայ էր»[17]։ Իբրև լրացուցիչ հիմնավորում նա հիշատակում է 1295 թ. Գրիգոր Անավարզեցու դեմ գումարված ժողովը, որի անդամների թվում Այրիվանեցու անունը նշված չէ։ Դա, ըստ Գ. Հովսեփյանի, «անկարելի կլիներ, եթե նա կենդանի լիներ»[18]։

Ուշադրություն դարձնելով Մատենադարանի № 84 ձեռագրում գտնվող «վախճանեցաւ սուրբ վարդապետն Մխիթար Այրիվանեցին թվականիս մերոյ ՉՉՉ (1337), փետրվարի Ժ (10)»[19] տեղեկության վրա, Գ. Հովսեփյանը միաժամանակ ցույց է տալիս, որ այն քաղված է Մխիթար Սասնեցու վարքից և Մխիթար Այրիվանեցուն չի վերաբերում։ Նա այս ճիշտ եզրակացությունը կատարելիս, սխալմամբ «ՉՉՉ» (1337) թվականի փոխարեն դրել է «ՉՇՉ» (1307)։ Հետագայում Ն. Ակինյանը, քննելով Այրիվանեցու մահվան թվականի հարցը, հիմք է ընդունել այս սխալ հաշիվը և նրա մահը նշանակել 1307 թ.՝ 83 տարեկան հասակում[20]։ Ն. Ակինյանը, անդրադառնալով Մխիթար Այրիվանեցու մահվան վերաբերյալ Գ. Հովսեփյանի բերած փաստարկներին՝ Գրիգոր Անավարզեցու հարցի կապակցությամբ, հանգում է այլ եզրակացության։ Բանն այն է, որ Անավարզեցու դեմ 1295 թ. գրված նամակի տակ կա նաև «Եւ տէր Մխիթար Հաւուց Թառի եպիսկոպոս» ստորագրությունը։ Ն. Ակինյանը նրան նույնացնում է Մխիթար Այրիվանեցու հետ և բացատրում, թե XII—XIV դդ. Հավուց Թառը Գառնիի եպիսկոպոսության աթոռանիստն էր, նրա արքեպիսկոպոսը՝ Մխիթար Այրիվանեցին, որը, նստելով Այրիվանքում, այնտեղից «կը հովուէր իր թեմը»[21]։ Ն. Ակինյանը, անշուշտ, այս տողերը գրելու համար ունեցել է պատշաճ հիմք, որը, սակայն, մեզ հայտնի չէ։ Այս տեսակետից ուշագրավ է 1214 թ. գրված մի հիշատակարան, որի համաձայն Հավուց Թառը պատկանելիս է եղել Զաքարյաններին («ի տէրութեան տեղտոյս Իւանէի»)[22]։ Հնարավոր է, որ այդ վանքը ևս, Գեղարդավանքի հետ միասին, Պռոշ իշխանը գնած լիներ Իվանե Զաքարյանից և միացրած իր տիրույթներին։ Սակայն, այսքանով նոր խոսք ավելացնել Մխիթար Այրիվանեցու կենսագրության վրա հնարավոր չէ։ Այս առումով ուշագրավ է նրա նորահայտ «Տոմարի տեսութիւն» աշխատության հեղինակման թվականը։ Աշխատության պահպանված հատվածների տոմարական հաշվումները ցույց են տալիս, որ այն գրված պետք է լինի 1297—1300 թթ.[23], իսկ դա նշանակում է, որ Մխիթար Այրիվանեցին 1289 թ. հետո շուրջ տասնամյակ կենդանի է եղել։ Ուրեմն ի՞նչն է պատճառը, որ նա այլևս չի երևացել եկեղեցաքաղաքական ոլորտում։ Ինչպե՞ս է անցկացրել նա իր կյանքի վերջին տարիները։ Ահա այս հարցերի պատասխանը գտնում ենք հիշյալ քարայրի արձանագրությունում։ Այստեղից հայտնի է դառնում, որ Մխիթար Այրիվանեցին 1289 թ. կառուցելով քարայրը, անցել է ճգնավորության՝ նրանց համար սահմանված կանոններով. «Եւ՝ բազմամեղ տէր Մխիթարս շինեցի զանապատս եւ անուանեցի ժամատանս տեղի անսբաղ աղաւթից։ Բնակեցա ի սմա աւուրքս ԻԴ կանոնաւք»։ Ահա, սրանով պետք է բացատրել և այն, որ Այրիվանեցին չնայած կենդանի է եղել, բայց չի մասնակցել Գրիգոր Անավարզեցու դեմ գումարված ժողովին։

---

17 Գ. Հովսեփյան, Մխիթար Այրիվանեցի, էջ 15։

18 Նույն տեղում։

19 Մատենադարան, ձեռ. № 84, թ. 282բ։

20 Ն. Ակինյան, Մխիթար Այրիվանեցվո Ճառընտիրի նորագյուտ հիշատակարանը, էջ 120—124։

21 Նույն տեղում։

22 Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 356։

23 Է. Հարությունյան, Բանասիրական դիտողություններ Մխիթար Այրիվանեցու «Պատմութիւն ժամանակագրական» աշխատության մասին (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1979, № 5, էջ 75—77)։

Մխիթար Այրիվանեցին իր ճգնավորական տարիներին զբաղվել է հիմնականում ստեղծագործական աշխատանքով։ Այդ են վկայում նրա Պատմությունում պահպանված հետևյալ տողերը. «Իսկ զայս իրակերտութիւնս, զոր սկսայ յուսով Աստուծոյն ոչ յազագս յիշատակի ինչ բարեաց յաստուածայինս կամ ի մարդկայինսն, այլ զմիտ իմ մարզելով ի գործս և ի տեսութիւնս գրաւորական վերծանութեանց, թերևս փոքր ինչ արգելցի ի ցնդմանէ երկրաքարշական ցնորմանց»[24]։ Քարայրում Մխիթար Այրիվանեցու ստեղծագործական աշխատանքի արգասիքն են նրա Պատմությունն ու «Տոմարի տեսութիւն» աշխատությունները։ Հնարավոր է, որ սրանցով չի ամբողջանում մատենագրի այդ տարիների ստեղծագործությունների ցանկը։

Մխիթար Այրիվանեցին Այրիվանքի ժայռափոր առանձնարանում էլ, հավանաբար, կնքել է իր մահկանացուն։ Հիշյալ քարայրում այժմ էլ պահպանվում է հազիվ նշմարելի և քայքայված մի տապանաքար, որի ներքո, ըստ երևույթին, ամփոփված է նրա աճյունը։

НАДПИСЬ В ПЕЩЕРНОЙ КЕЛЬЕ МХИТАРА АЙРИВАНЕЦИ

ЭЛЕОНОРА АРУТЮНЯН

Резюме

В пещерном монастыре Гехард сохранилась келья Мхитара Айриванеци с его надписью. В свое время надпись расшифровал и опубликовал Гарегин Овсепян, который указанную в ней дату связал с годом рождения Мхитара Айриванеци. Новая расшифровка надписи показывает, что последняя не связана с возрастом Айриванеци, а две содержащиеся в ней в шести видах летосчисления даты указывают на время создания кельи и высечения надписи. Вся надпись в целом проливает свет на последние годы жизни Мхитара Айриванеци, о которых до сих пор ничего не было известно.

---

24 *Մատենադարան, ձեռ. № 562, թ. 3բ։*